

«ԲԱՂՏԻՕ ՍԵԱՆ»Ի ՏՆՕՐԵՆ՝ ՄԱՅՔ ՎԱՅԷՃԵԱՆ

Posted on April 27, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Հարցազոյցը վարեց՝ Համօ Մոսկոֆեան, Պէյրուք, 27 Ապրիլ 2010

✘ Հ. Պրն. Վայելեան, այս երիտասարդ հասակին ստանձնեցիք Լիբանանի «14 Մարտ» քաղաքական ուժերու եւ անոր մաս կազմող հայ կուսակցութիւններու ձայն «Ռատիո Սեւան»-ի տնօրէնութիւնը: Ե՞րբ նշանակուեցաք այդ պաշտօնին:

Պատ. 2007 թ. Հոկտեմբեր 28-ին, «Ռատիո Սեւան»-ը առաջին անգամ եթեր դուրս եկաւ: Տնօրէնութիւնը ստանձնեցի Դեկտեմբերի 1-ին: Այդ օրերուն Հայաստան կը գտնուէի, ուր աւարտելէս ետք ուսումս՝ կ'աշխատէի: «Ռատիո Սեւան»-ի հիմնադիր նախագահ Արա Սիսեռեանի հրաւերով անցայ գործի, Պէյրուքի «Քարաքօլ Տրուզ» շրջանին մէջ՝ 4 պաշտօնեաներու օժանդակութեամբ: Այսօր, մեր ռատիօկայանի աշխատողներու թիւը կը հասնի 31-ի, որպէս մէկ «ընտանիք»-ի անդամներ եւ ոչ պաշտօնեաներ:

Հարցազոյցը վարեց՝ Համօ Մոսկոֆեան, Պէյրուք, 27 Ապրիլ 2010

✘ Հ. Պրն. Վայելեան, այս երիտասարդ հասակին ստանձնեցիք Լիբանանի «14 Մարտ» քաղաքական ուժերու եւ անոր մաս կազմող հայ կուսակցութիւններու ձայն «Ռատիո Սեւան»-ի տնօրէնութիւնը: Ե՞րբ նշանակուեցաք այդ պաշտօնին:

Պատ. 2007 թ. Հոկտեմբեր 28-ին, «Ռատիո Սեւան»-ը առաջին անգամ եթեր դուրս եկաւ: Տնօրէնութիւնը ստանձնեցի Դեկտեմբերի 1-ին: Այդ օրերուն Հայաստան կը գտնուէի, ուր աւարտելէս ետք ուսումս՝ կ'աշխատէի: «Ռատիո Սեւան»-ի հիմնադիր նախագահ Արա Սիսեռեանի հրաւերով անցայ գործի, Պէյրուքի «Քարաքօլ Տրուզ» շրջանին մէջ՝ 4 պաշտօնեաներու օժանդակութեամբ: Այսօր, մեր ռատիօկայանի աշխատողներու թիւը կը հասնի 31-ի, որպէս մէկ «ընտանիք»-ի անդամներ եւ ոչ պաշտօնեաներ:

Հ. Ի՞նչ պիտի ե կացութիւնը ռատիօկայանէն ներս:

Պատ. Մենք սկզբնաւորութեան կը սփռուէինք միայն երաժշտութիւն: Կը ✘
հեռարձակէնք մեր հաղորդումները 24 ժամ ամէն օր, նաեւ համացանցով՝ [Radio Sevan](#): Առաջին օրերը 500 ունկնդիր ունէինք միայն, այժմ 36000-ի կը հասնի մեր հաղորդումներուն հետեւողներուն թիւը: Այսօր, 70 երկիրներէ կայքէջքով ունկնդիրներ ունինք, որոնց հետ կը պահպանենք աշխոյժ նամակագրութիւն: Երբ յայտագիրներու ծրագրին պիտի սկսէինք՝ 2008 թ.-ի Մայիս 7 Պէյրուքի տխուր դէպքերուն՝ «Ռատիո Սեւան»-ի առաջին գրասենեակը հրոյ-ճարակ դարձաւ: Սակայն մենք մեր յոյսը չկորսնցուցինք եւ 12 ժամ յետոյ սկսանք դարձեալ եթեր ելլել միայն երաժշտութեամբ ու 32 օր յետոյ՝ Պէյրուքի Մար Սիխայէլ հայաշատ շրջանին մէջ բացումը կատարեցինք «Ռատիո Սեւան»-ի նոր կեդրոնատեղիին:

Հ. Ի՞նչ յայտագիրներ կը պարունակէ «Ռատիո Սեւան»-ը:

Պատ. Մեր հաղորդումները միայն հայերէնով է որ կը հեռասփռուին: Ունինք լուրերու, երաժշտութեան, տեղեկատուութեան, թեքնոլոյժիի ու հեռասփռման, ղեկավարման մասնաբաժիններ: Այժմ ունինք 14 յայտագիր՝ «Նաւասարդ», «Գաւաթ մը սուրճի շուրջ»,

«Սօնտիալ»-ի ֆուլթայլ, գրական, մշակութային, «Շողարձակ» եւ այլ յայտագիրներ: Լուրերը 5 անգամ օրական (առաւոտեան ժամը 8-ին, 12-ին, 4.30-ին, 6-ին ու երեկոյեան ժամը 9-ին):

Կը կազմակերպենք նաեւ մշակութային ելոյթներ: Առաջին անգամ համերգով հանդէս եկան՝ Այտա Սարգիսեան եւ «Արմէնոյդս»-ը, ապա՝ Զարուհի Բաբայեանն ու Սոֆի Դեւոյեանը: Վերջերս կազմակերպեցինք նաեւ համերգ Արամէի ու Նուազախումբին մասնակցութեամբ: Ամիս մը ետք պիտի հրաւիրենք Վիգէն Դարբինեանը: 18-ը Յուլիս 2010-ին Պէյրութի նշանաւոր «Պիել» համալիրին մէջ՝ Արման Յովհաննէսեանի ու Նուազախումբին համերգն է որ տեղի պիտի ունենայ: Այս բոլորին նպատակը՝ հայ մշակոյթի ճանաչումն ու տարածումն է նաեւ լիբանանեան եւ լիբանանահայ շրջանակներու մէջ:

Հ. Ի՞նչ կապեր ունիք հայրենիքի հետ:

Պատ. Մայր Հայրենիքի մէջ ալ ունինք ներկայացուցիչներ, որոնք հայկական երաժշտութեան վերջին նորութիւնները կ'ուղարկեն մեզի եւ կրնամ ըսել որ Սփիւռքի մէջ ամենէն մեծ երաժշտական արխիւն ունինք այսօր: Սերտ յարաբերութեանց մէջ ենք Հայաստանի Սփիւռքի Նախարարութեան հետ, գլխաւորութեամբ Հրանուշ Յակոբեանի: Սկսած ենք նաեւ «production»-ի: Արդէն իսկ «Արմէնոյդսի»-ի հետ «Հայ Նինար» երգը, որ արդէն «Video clip»ներով 3-րդ շաբաթն է որ առաջին տեղը կը գրաւէ Հայաստանի «Top 10»-ի յայտագիրներէն: Կայքէջքի առումով ալ պիտի նշեմ որ 2009 թուականին Press.am-ի վիճակագրական տուալներով, «Ռատիո Սեւան»-ը ամենէն բարձր դասաւորումն (rating) ունի:

Ռատիօկայանը չի կրնար մնալ իր նոյն տեղը այլ նոր ծրագիրներ կը մշակենք: Այժմ աշխատանքներ կը տարուին Հայաստանէն եւ Սփիւռքէն 2 ուրիշ ռատիօկայաններու հետ միացեալ ծրագիրներով կարծիքներու փոխանակում կատարելու եւ կապերը ամրապնդելու համար Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի զանազան գաղթօճախներուն միջեւ:

Հ. Ի՞նչ է Ձեր խօսքը, պատգամը Լիբանանի, Սփիւռքի եւ Մայր Հայրենիքի բազմահազար ունկնդիրներուն:

Պատ. Մեր յայտագիրներուն նպատակն է քննադատական մտածողութիւնը զարգացնել մեր ունկնդիրներուն ու ժողովուրդին մօտ՝ որպէսզի կարողանան ճիշտը՝ սխալէն զանազանել եւ ոչ թէ ինչը որ իրենց ըսուած է զայն կատարեն: Այս ձեւով ու ճանապարհով է որ մշակոյթներ կրնան յառաջ երթալ երբ իրենք գիտակից ըլլան եւ մանաւանդ մեր լուրերն ու յայտագիրներ առարկայական ըլլան: Գալով Լիբանանի պարագային, հայ երիտասարդութեան կը հրամցուէր «հին» երգեր, այդ պատճառով ալ մեծ մասը հայ երգ ու երաժշտութիւն չէին ունկնդրեր: Մենք ըստ արժանւոյն գնահատելով մեր հին երաժշտութիւնը, նոր երգերու հեռասփռումով, հայ երգիչներու եւ արուեստագետներու հետ ծանոթացմամբ, շփմամբ՝ երիտասարդ սերունդը դարձեալ

Կապեցինք հայ երաժշտութեան, արուեստին:

Ինչպես անցեալին, այնպես ալ այսօր, հայ ժողովուրդը գոյատեւած է իր երգ ու երաժշտութեամբ, մշակոյթով: Ինչպես նշեցինք, այդ առնչութեամբ ունինք բազմաթիւ նոր ծրագիրներ` մեր, Սփիւռքի եւ Մայր Հայրենիքի գործընկերներուն հետ` մասնակից դարձնելով ամեն օր հեռախօսով կամ համացանցով մեզի հետ կապուող բազմահազար ունկնդիրները, որոնց շնորհակալութիւն կը յայտնենք եւ կը խոստանանք ըլլալ միշտ իրենց հետ:

